Քաղվածք

«ՎԱՆԱՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՏԱԼՎՈՐԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ 2022 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ N 16 ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստը գումարվել է 2022 թ –ի հոկտեմբերի 12–ին:
Նիստին մասնակցում են խորհրդի 14 / տասնչորս / անդամ :

ՕՐԱԿԱՐԳ

1. «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հաստատված մրցույթի փաստաթղթերի հայտերի հավաքագրման և գրանցման ժամկետը երկարացնելու վերաբերյալ հարցի քննարկում: / զեկուցող՝ Նվեր Պետրոսյան /:

ԼՍԵՑԻՆ.

Նվեր Պետրոսյանը ներկայացրեց, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 6-րդ պահանջներին համաձայն մասնակցության հայտերի բացակայության պատճառով փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարացվում է մեկ անգամ՝ 15 աշխատանքային օրով:

Առաջնորդվելով տնօրենի ընտրության (նշանակման) գործող կարգի դրույթներով և հիմք ընդունելով կառավարման խորհրդի նախագահի տեղեկատվությունը, դպրոցի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇԵՑԻՆ

<<Վանանդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի մասնակցության համար փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարացնել մեկ անգամ՝ 2022 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև նոյեմբերի 2-ը ներառյալ:

Մրցույթը ըստ գործող կարգի նշանակել 2022 թվականի նոյեմբերերի 16-ին ժամը 15:00-ին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի «Վանանդի միջնակարգ դպրոց» և «Տալվորիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1. ՀՀ քաղաքացիությունը,
2. <<Հանրակրթության մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5.ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Վանանդ, Պարույր Սևակ 6:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093205070 հեռախոսահամարով, էլեկտրոնային հասցե՝ vanandidproc@mail.ru :

Տեղեկությունների համար զանգահարել **093-20-50-70** կամ **077-69-00-15** հեռախոսահամարներով: